Հայտարարություն

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը, ղեկավարվելով ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020 թ. դեկտեմբերի 24-ի թիվ 48-Ն հրամանով հաստատված՝ «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կազմակերպման և անցկացման կարգ»-ի դրույթներով, հայտարարում է միջին մասնագիտական կրթական ծրագրով Հաղորդակցություն», «Գործարար հաղորդակցման հմտություն և հոգեբանություն» «Կոնֆլիկտների, փոփոխությունների և սթրեսների կառավարում», «Գործակցություն կազմակերպության ստորաբաժանումների և ծառայությունների հետ», «Ղեկավարման հմտություններ, հոգեբանություն և էթիկետ» մասնագիտական մոդուլներ դասավանդող դասախոսների թափուր հաստիքների համալրման մրցույթ:

Մասնագիտական մոդուլ	**Ժամ**
Հաղորդակցություն	396 (որից 72-ը ՆՄԿԾ)
Գործարար հաղորդակցման հմտություն և հոգեբանություն	72
Կոնֆլիկտների, փոփոխությունների և սթրեսների կառավարումը կազմակերպություններում	216
Գործակցություն կազմակերպության ստորաբաժանումների և ծառայությունների հետ	320
Ղեկավարման հմտություններ, հոգեբանություն և էթիկետ	144
Ընդամենը թափուր ժամեր	**1148**

Պետական կրթական չափորոշիչով դասավանդողին ներկայացվող պահանջներ՝ «Հաղորդակցություն, «Գործարար հաղորդակցման հմտություն և հոգեբանություն» մասնագիտական մոդուլները դասավանդող դասախոսը պետք է ունենա դասընթացի բնույթին համապատասխանող («Կառավարում» կամ «Շուկայագիտություն (Մարքեթինգ)» մասնագիտություններով կառավարման մագիստրոսի կամ բակալավրի որակավորում, բարձրագույն կրթության «Կառավարում», «Կառավարումը սոցիալական ոլորտում», «Պետական և մունիցիպալ կառավարում», «Հակաճգնաժամային կառավարում», «Շուկայաբանություն (Մարքեթինգ)», «Կոմերցիա», «Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում (ըստ ճյուղերի)», «Աշխատանքի տնտեսագիտություն» կամ «Բիզնեսի կազմակերպում») բարձրագույն

կրթության կառավարման, կոմերցիայի կամ տնտեսագիտության մագիստրոսի կամ բակալավրի կամ ինտեգրված կրթական ծրագրի շրջանավարտի մասնագիտական որակավորում, միջին մասնագիտական կրթության «Մենեջմենթ (Կառավարում)» կամ «Շուկայաբանություն» մասնագիտությունների կրթական ծրագրով համապատասխան մասնագետի որակավորում:

«Կոնֆլիկտների, փոփոխությունների և սթրեսների կառավարումը կազմակերպություններում», «Գործակցություն կազմակերպության ստորաբաժանումների և ծառայությունների հետ», «Ղեկավարման հմտություններ, հոգեբանություն և էթիկետ» մասնագիտական մոդուլները դասավանդող դասախոսը պետք ունենա դասընթացի բնույթին համապատասխանող բարձրագույն կրթության «Կառավարում» մասնագիտությամբ կառավարման մագիստրոսի կամ բակալավրի որակավորում, բարձրագույն կրթության «Կառավարում», «Կառավարումը սոցիալական ոլորտում», «Պետական և մունիցիպալ կառավարում», «Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում (ըստ ճյուղերի)», «Հակաճգնաժամային կառավարում», «Աշխատանքի տնտեսագիտություն» մասնագիտություններով կառավարման կամ տնտեսագիտության մագիստրոսի կամ բակալավրի կամ ինտեգրված կրթական ծրագրի շրջանավարտի մասնագիտական որակավորում, միջին մասնագիտական կրթության «Մենեջմենթ (Կառավարում)» մասնագիտության կրթական ծրագրով համապատասխան մասնագետի որակավորում:

Մրցույթին մասնակցելու համար հավակնորդները հայտարարության մեջ նշված ժամկետում **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի փաստաթղթաշրջանառության բաժին** են ներկայացնում ներքոնշյալ փաստաթղթերը՝

1) դիմում (լրացված՝ կցված Ձև 1-ին համապատասխան),

2) կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ՝ բնօրինակը և պատճենը),

3) անձնագիր (բնօրինակը և պատճենը),

4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),

5) ինքնակենսագրություն (կցված Ձև 4-ին համապատասխան),

6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,

8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ (բնօրինակը և պատճենը),

9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճանը, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Լրացված դիմումը և բոլոր անհրաժեշտ փաստաթղթերն ընդունվում են 2025 թվականի **օգոստոսի 7-ից 2025 թվականի օգոստոսի 20-ը ներառյալ**՝ ժամը 10:00-ից մինչև ժամը 16:00-ն (բացի շաբաթ, կիրակի և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից), ՀՊՏՀ **փաստաթղթաշրջանառության բաժին** (հասցե՝ ք. Երևան, Նալբանդյան 128, ՀՊՏՀ կառավարման ֆակուլտետ (կենտրոնական մասնաշենք), 3-րդ հարկ, հեռ. (+374 10(59-34-23):

Մրցույթը տեղի կունենա 2025 թ. օգոստոսի 25-ին՝ ժամը 10:00-ին, հասցե՝ ք. Երևան, Նալբանդյան 128, ՀՊՏՀ կառավարման ֆակուլտետ (կենտրոնական մասնաշենք):

Ձև 1

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան
(Ֆինանսատնտեսագիտական քոլեջ)

_____

_____

_____

(նշվում է թափուր տեղի անվանումը)

Մանկավարժի թափուր պաշտոնի մրցույթին մասնակցելու նպատակով
ՀՊՏՀ ռեկտոր պարոն Ա.Վ. Գրիգորյանին

_____ -ից

(դիմողի անունը, հայրանունը, ազգանունը)

_____

(դիմողի հաշվառման վայրը)

_____

(դիմողի հեռ. (աշխատանքային, բնակ., բջջ.)

_____

(անձնագրի սերիան, համարը, երբ և ում կողմից է տրվել)

Ծնված՝ _____

(օրը, ամիսը, տարին, վայրը)

Դ Ի Մ ՈՒ Մ

Ծանոթանալով Մանկավարժի թափուր պաշտոնի համար տրված հայտարարությանը, մրցույթի պայմաններին և անցկացման կարգին՝ խնդրում եմ գրանցել ինձ որպես մրցույթի մասնակից

Քաղաքացիությունը _____

Դատապարտվել եմ՝ այո, ոչ (ընդգծել)_____

Դատվածությունս հանված կամ մարված է՝ այո, ոչ (ընդգծել)_____

Դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչվել եմ՝ այո, ոչ (ընդգծել)_____
Դատական կարգով մանկավարժական կամ վարչական գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկվել եմ՝ այո, ոչ (ընդգծել)_____

ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 24-ի թիվ 1030-Ն որոշմամբ հաստատված հիվանդությունների ցանկի որևէ հիվանդությամբ տառապում եմ, չեմ տառապում (ընդգծել) _____

Համակարգչային գրագիտությունը _____
_____

(տիրապետման մակարդակը, համակարգչային ծրագրերի իմացությունը)

Կից ներկայացնում եմ մրցույթի մասին հայտարարությունում նշված փաստաթղթերը:
Նախազգուշացված եմ կեղծ տվյալներ և փաստաթղթեր ներկայացնելու համար սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվելու մասին:

Դիմող՝ _____ «____» _____ 20 __ թ.

Ձև 4

Ինքնակենսագրություն

1. Աշխատանքային գործունեություն (վերջին աշխատանքի վայրը լրացվում է առաջինը)
2. Կրթություն (մասնագիտական կրթության որակավորման աստիճանը՝ դիպլոմ(ներ), կրթության վկայագրերը, հավաստագրեր, վկայականներ)
3. Կոչումներ
4. Որակավորման տարակարգ
5. Հրատարակած հոդվածներ
6. Լեզուների իմացություն
7. Համակարգչային իմացություն
8. Այլ տվյալներ: